



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Եղանգ ձեր յաւելուած «ԱԱ.ՕԳ.ՊԱ.ՀԻ. ԹԵՐԹՈՒ-Ի

XIX

፩፻. ቤትታ ማጠገበና

ଫିଲେ ପରିବାର

ԾԱՂԻԿ

66

ՊԱՏՌԻԱՆ

5 Եկարով

No. 11

1904

616-9

Q-88

ԱՐԱՆՁԻՆ ԳԻՒՆ Է 15 ԿՈՊ.

30 JUL 2010

616
4-88

610

19-ԱՐ

ԲԺ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒԻՆԻ

Բ Փ Ե Կ Ի Զ Բ Ո Յ Ց Յ Ե Բ Ր Ա Հ 11


ԾԱՂԻԿ ԿԱՄ ԾԱՂԿԱԽՏ

ԵՒ

Պ Ա Տ Ո Ւ Ա Ս

300
000
19983

Վերապարզ



Թ Ի Ֆ Լ Ի Ւ
Տարբան „ՀԱՅԹՎԵՒՄ“ Միհայլի փող. № 81.
(14)

22 FEB 2013

0.6%

ՂՊԵՎՍԼԻԿԻ ՂԹԻԳՆՔՆԵՑՈ ՑԱՀԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1st & 2nd. or. Q. - Please see my notes for
details.

Մենք այժմ լիբերա տեղուած ունեցանց ենք հասկըսաց այն զարգացման աշխատավոր առ առանց էր առաջ այդ հիմնա- դպրությունը:

Պատմագրեր յիւսակում են պահպիսի համահայկ-
ներ, որոցից ազգաբնակութեան անազին մար կոռուուել է: Մի պատմաբնի ասելով, Եւրոպայում բանի պատմատու-
չկար, ամբող ազգաբնակութեան $\frac{1}{12}$ - $\frac{1}{10}$ -ը (այսինքն 10
մարդից մեկը) մեռնում է, իսկ նինջ մեռնող երեխայից ե-
րեք ծայկից է: Մի ուրիշ գրող բացականում է. «ամեն ինչ
դրույթ է ծայկի բանից»: Երեքն համահայկն այնպար
ստպանի էր, որ մեռածները անքաղ էին մնում: 18-րդ դա-
րում մի կղզու վրա ամբող ազգաբնակութեանից մի երկու ե-
րեխայ մրացի վրկուեցին, այն էլ որպիսնեւ պատմատու-
ծելի: Հերկասանի Տիրեւ բազմում մի անգամ համահայկն
այնեան սպասափեկի էր, որ ամենից վախան էն երեք սարի
շաբաթը անայի մնաց:

Եթէ ծաղիկը չէր սպանում իր զանին, նա կուտանալում, խաղեալ էր, նուազեցնում, ուժասպան էր անում ու փանցանում դրանունք: Կորեթի 2/3-ը ծաղիկից էին կուտանած:

Ամեն դասակարգի ու ամեն հասալիք մարդիկ—նուայիններից սկսած մինչև ծերեր,՝ ատենի փառակում էին ու նուային թանօսիացց բազումը Լուի XV-ը ծափիկից մեռաւ, ինչպէս եւ ուստաց կայսր Պետրո II-ը: Սյս ցանք այնուահանութիւն էր, որ նիւազնից փախում էին, ամենաօտ ազականներն անզամ, նոյնիսկ մայրերը անէր էին թղթում ինց զաւակներից:

Մեր օրենում նիւաղը սահմանած է, բայց էլի սկզբնին

ԵԱՂԻԿ ԵՒ ՊԱՏՈՒԱՅ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ,

ԾԱՀԻԿ

1. Ի՞նք է ծԱՂԻԿԸ

Ծաղիկը վարակիչ նիւանդութիւն է:
Վարակը (վարակիչ թոյնը) գտնուում է բըշ-
տիկների թարախի մէջ.—Եթէ վերցնենք այդ
թարախից և պատուաստենք առողջ մար-
դի, կիւանդացնենք նրան: Մինչև անդամ
չորսնալուց էլ թոյնը չի ոչնչանում:

Դեռ ևս ծաղիկի խոկական յարուցանսող
միկրոբը գտնուած չէ, բայց պէտք է են-
թագրել, որ այս հիւանդութեան (ինչպէս և
բոլոր վարակիչ հիւանդութիւնների) պատ-
ճառն էլ մի միկրոբ է, որը գտնուում է մի-
միայն բշտիկների թարախի մէջ *): Եւ, յի-
շաւի, հիւանդի ուրիշ ոչ մի արտադրութիւն
վարակիչ զօրութիւն չունի. ոչ թուքը, ոչ
մէղը, ոչ քրաքինքը, ոչ էլ արիւնքը:

^{*)} Տեսակից ապահովանելու հիմքը տիրունաբը և նրանց
թունը՝ գրքուկը:



ԷԳՈՒԱՐԴ ԶԵՆՆԵՐ

Նապիկի տռաջին պատուաստը, ծննդեց 1749 թուին, մազինի
17-ին, մահաւ 1823 թ. լունի, 26-ին, 74 տարեկան նասակրում։
(Գիլիամ Յորդէր Ճիթանիարից, որ մասուցած էր
անդլիացոց թագաւոր Գևորգ 14-ին)։

Ծաղիկի թոյնը շատ թռաւցիկ է, այսինքն. հեշտութեամբ է անցնում օդի միջով։ Այնպէս որ ոչ միայն վարակում են այն անձինք, որոնք շփւում են նիւթիւանդի հետ, ինչամում նրան, լուանում են նրա շուրերը և այլն և այն, այլ և նրանք, որոնք մանում են միքանի բովէով հիւանդի սենեակը և գուրած գալիս։ Պատահում է, որ տնից տուն է անցնում վարակը։ Յաճախ էլ մի անձի միջոցով է կատարւում վարակումն, այսինքն մի մարդ շփուելով հիւանդի հետ ինքը չի վարակում, այլ վարակը անում է դուրս (հագուստի, ձեռների հետ) և մի ուրիշի վարակում։ Դիակներն էլ վարակիչ զօրութիւն ունին։ Այսինքն պիտի այլ պիտինանք, որ այդ ցաւը վարակիչ է նոյն իսկ բշտիկներ գուրած տալուց առաջ։ Այսինքն Ասկայն պէտք է դիտենանք, որ այդիկի վարակը չափազանց դիմացկուն է։ Նա կարող է մի ամրիւե աւելի թագնուած մնալ և էլի վարակի մարդկանց։ Եղել են գէպքեր, երբ հիւանդը մի ամբողջ տարի հեռացրած է եղած մի տնից, և մի տարուց յետոյ այդ տունը մտնողը վարակուել է։

2. ՎԱՐՍԿՈՒՄԸԼ վաճառն
մեր արք նույնը կ պիտի տուցէ մարդու
վաժակը մտնում է մեր մարմնից մեջ
զիսանորապէս օդի հետ շնչառութեան միջնա-
ցին: Օդի հետ մտնում է նա մեր թոքերը,
թոքերի մէջ խառնում է արեան հետ, այն-
տեղ աճում է ու թունաւորում մեզ: և առան-
վագէս է առասարակ կատարուու
վարակումն: Բայց կարող է պատահել նոյն-
պէս, որ այդ թոյնը ուղղակի ընկնի մեր
արեան մէջ մի որևէ վերքի, կամ պատողւածի
ու քերծուածի միջնով:

Ոչ մի հասակի մարդի չի խսայում
ծաղիկը: Մինչեւ անգամ եղել են դէպքեր,
որ նորածին երեխան ծնուելիս ծածկուած
է եղել ծաղիկի ցանով (դուրս տուածով):
Այդ պատահում է, երբ մայրը ծննդաբերու-
թեան ժամանակները ծաղիկ է ունենուում:
Ծաղիկը, ինչպէս առել ենք, տարածուած է
ամեն երկրներում, ամեն կիմայում ու եւ-
դանակներում: Մի անգամ հիւանդացածը
ընդհանրապէս այլև չի վարակուում: չա-
փազմնց հազիւ է պատահում, որ երկ-
րորդ անգամ մարդ հիւանդաց, իմկ երեք
անգամ—երբէք:

3. ԾԱՂԻԿԻ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ: խթան
ոչ զգով զոր օրու բանով մաս ամփակա-
ստանում էնք ծաղիկով հիւանդի բառա-
նեակը, ձեռ ենք տալիս նրան իրան կամ ի-
րերին, շնչում ենք վարակուած օդով ու վա-
րակուում: բանագը այսպէս կարգանդան գույնի նարայ

Սակայն իսկոյն չենք հիւանդանուում:
Անցնում է 10—14 օր, վարակը կամաց կա-
մաց աճում է մեր արեան մէջ և մենք ո-
չինչ չենք զգում: Ճշմարիտ է այս չինչ չենք
զգում, ցաւի ոչ մի նշան չկայ մեզ վրայ,
բայց այնուամենայնիւ մենք արդէն վարու-
կուած ենք և մինչեւ անգամ ուրիշներին էլ
կարող ենք վարակել:

Թող տարօրինակ չժուեի ասուծու: Պատ-
մեմ մի վարմանալու դէպքը, որ հաստատուեմ
է ինչ որ ասեցի:

Մի հիւանդանոցում պառկած էր մամի
հիւանդ, որի վէրքերը չեին ծածկւու: Այդ
պիսի դէպքերում վէրքերի առողջանալը ա-
րագացնելու համար այսպէս են կտրուում:
Եղն հիւանդի կամ մի ուրիշ մարդի մաշ-
կից վոքրիկ, բարակ կտրներ են կտրում ու
դնում վէրքի վրա (պատուատու են անում),
այդ կտորները կտրում են աճում-տարած-
ում ու վէրքը շուտով ծածկւում է նոր

մաշկով։ Յիշած հիւանդանոցումն էլ նոյնն արեցին։ Մի հիւանդ կար, որի վերքը չէր լսւանում և հարկաւոր էր այդ ձեկի պատուաստ անել։ Հէնց այդ միջոցին մի կը նոջ թեր պիտի կտրէին։ Բժիշկը օգտուեց կարած թեր մաշկով և նըանից կտրոներ վերցրեց ու պատուաստեց յիշած հիւանդի վերքի վրա։

Հիմի տեսէք թէ ինչ պատահեց։

Մի քանի օրից յետոյ կնոջ մարմի վրա զուբս տուեց ծաղիկի բշամիկներ և երկու օր անց, այն հիւանդն էլ, որին պատուաստել էին այդ կնոջ թեր կաշին, բըռչ նուեց ծաղիկով։

Կասկած չկայ, որ թեր կտրելու ժամանակ, այդ կինը արդէն վարակուած էր ծաղիկի թոյնով, թէև գեռ ոչ մի նշան չկար վրան։ Հիւանդութիւնը մի քանի օրից յետոյ միայն երկան եկաւ, բայց քանի որ պատուաստի մաշկի կտրոների մէջ էլ թոյն կար արդէն, այն մարդն էլ վարակուեց։

Այսպէս ուրեմն, 10—14 օր է հարկաւոր, որ ծաղիկի թոյնը արտայայտուի մի որևէ ախտանշանով։

Այս ժամանակամիջոցը, — թոյնը ընդունելու բովէից մինչև հիւանդութեան ախ-

տանիշների երևալը, — կոչուում է զաղսնի կամ խոնրաման ուղան։

Անցաւ այս շրջանը, վարակման 14-րդ օրն է։ Յանկարծ մի սաստիկ դողլոց վրա է տալիս, որը տեսում է $\frac{1}{2}$ ժամ, մի ժամ և աւելի, ու մարմնի տաքութիւնը արագ բարձրանում է և մի քանի ժամուայ մէջ հասնում $39-40$ աստիճանի^{*)}։ Զերմի հետ, ի հարկէ, արագանում է նաև պուլսը (զարկերակը), որը մի բովէում $120-150$ անգամ է խփում, շնչառութիւնը ծանրանում է, հիւանդը հեռում է, սրանեղանում, իսկ երեխաները ունենում են ուշագնացութիւն, կարկամութներ, զառանցանք և այլն։

Միենոյն ժամանակ սոսկալի ջարդող գիսացաւը հանգիստ չի տալիս հիւանդին։ Նոյն ձեկի ցաւեր են զգացում մէջքում, ու տերին ու թևերին։

Ախորժակը, ի հարկէ, կորած է, բերանից գարշահոտութիւն է բուրում, լիզուն չոր է ու սպիտակ վառով ծածկուած, փուրը կապ։ Յաճախ սրտխառնութիւն և փրսիումն։ Ամբողջ մարմինը կարծես այրում է։

Աչքերը կարմրում են ու արտասուքով

^{*)} Մարմինաքութիւնը չափելու մասին առ. Ա. Ա. № 1.

լցւում, հիւանդը լուսին, չի կարող նայել:
 Երբեմն բգացաւ է վառաջ գալիք և ուժ
 հազ: Մէզը սաստիկ մուք է ու նուազ քա-
 նակով: Երբեմն քթից Քարիւնհոսովթիւն է
 լինում: Հիւանդը կարունակ հիւանդը
 տանշում է և դեռ անկարելի է որոշել թէ
 ինչ է լինելու հիւանդի դրս թիւնը: Ի հար-
 կեաթէ քաղաքում կամ դիւզում ծաղիկ կայ
 պէտք է ենթադրել որ ծաղիկ է լինելու:
 Զմոռանանք մտել, որ այս երկու երեք
 օրուայ մէջ մարմնի վրա զանազան բշտիկ
 ներ և ուցաներ են դուքսա առջիս, բայց սը-
 րանք ոչ մի նմանութիւն չունեմ ածաղիկի
 խական բշտիկների ծետաւ Այս շրջանում
 հիւանդը կարող է մեռնել Երբեմն ել ցա-
 ների հետ կամ առանց ցաների ամաջիկ վրա
 երևում են զանազան արնակոյտեր, որոնք
 քորոցի գլխի չափ մուք-կարմիր բժիկներ
 են: Երբ այս արնակոյտերը շատ են տարա-
 ծուած լինում մարմնիւ վրա, նրանք կարող
 են աեղ-աեղ միանալ և ընդարձակ բժեր
 կազմել, ինչպէս ալատահում է փորի ներ
 քեր մասում: Այս գէտքերում արնա-
 հոսութիւն է լինում բերանից ու յետ-
 քից: Մէզն առ կղկղանքը նոյնպէս արնա-

Խառն են վիճում: Այս ձեւը ամենածանր ծար-
 դիկն է, որից համարենալ բոլորը մեռնում են
 դեռ խական ծաղկացանից առաջ և առ-
 բայց Դողցոցից ու տաքութեան բարձրանդա-
 լուց 3-4 օր անց, դէմքի ու գլխի վրա
 դուրս են տալիս ծաղիկի խակական պղուկ-
 ները (ծաղկացան), մի օրից յետոյ, նոյն
 ցանը ծածկում է մարմինը: Ու նաև նաև
 Տեսնենք թէ ինչ առեսք ունի այդ ցանը:
 4. ԾԱՂԿԱՑԱՆԸ Բայց ոչ զից
 ու ոչ ուր զանակուց վճռ մրանի Ս ու հայ
 Ակզրում թիկ, բերանի շուրջը ու ձա-
 կատի վրա երեւմ են կարմիր բժիկներ: Ե-
 թէ մասով սեղմենք այս կարմրած տեղերը,
 բժիկները մի վայրկեան կկորչեն ու դար-
 ձեալ կնորոգուեն: Այդ նշանակում է, որ
 դեռ միայն արիւն է լցուել այդ տեղերում
 մաշկի մէջ, մաշկը բժիկների տակ քիչ ու-
 ռած է և քոր է տալիս ու ալրւում է:
 Հետեւալ օրը բժիկները մուք-կարմիր
 գոյն են ստանում և միենոյն ժամանակ
 դառնում են մանր կծիկներ-պղուկներ, որ
 կարելի է շօշափել, եթէ կամաց մասը վը-
 րայով անցկացնենք: Մի օր էլ անց, այսինքն
 հիւանդութեան 6-րդ օրը, այս կծիկների գա-

դաթըլցում է թափանցիկ պարզ հեղուկ կով, կազմելով բօժիկներ, Հեղուկը քանի զբում շատանում է, յետոյ բշտիկների գաղաթը պատում է (փոս է ընկնում) և կադմում է ծաղիկի պուրը, իսկ չորս կողմը մաշկը կարմրում է: Երբեմն ցանը սաստիկ խիտ է լինում, ամբողջ գէմքն ու մարմինը ծածկուած են այսպիսի ցանով: Պղուկները կարող են միանալ իրար, ձուլուել և այն ժամանակ գէմքը այլանդակ է դառնում, աչքերը չեն բացում, որովհետեւ կոպերն ուռած են: Միևնոյն ձեի բշտիկներ դուրս են տալիս նաև քթի, բերանի խոռոչներում, ըմպանի ու սոսորրի, շնչափողի վրա և այլն:

Հենց որ մարմինն սկսում է դուրս տալ, ջերմը պակասում է, նուազում են նոյնպէս ցաւերը: Բայց այս բոլորը ժամանակաւոր են, եւ երբ բօժիկնեն սկսում են բարախանալ, թէ սաբուրինը եւ թէ միս երեւոյթները նորից սաստկանում են:

Թարախանումն սկսում է ընդհանրապէս հիւանդութեան 9-րդ օրը:

Բշտիկների միջի հեղուկը, որը մինչեայդ բոլորովին պարզ ու թափանցիկ էր, սկսում է պղտորուել ու դառնում է թարախ: Բօժիկը դառնում է բարախարէիլ.

Բշտիկը մեծանում է, նրա շուրջը սաստիկ կարմրում է ու բորբոքւում, և թարախը այնպէս է լցնում բշտիկը, որ վերև յիշած փոսիկը (պղտար) ուղղւում է:

Այսպէս ուրեմն, իններորդ օրից յետոյ, ծաղիկը իր վերջնական ձևն է ստանում, որը ամենքին յայտնի է: Այժմ ամբողջ գէմքն ու գլուխը ծածկուած են փոքրիկ թարախակոյտիկներով, որոնք շատ թէ քիչ խիտ են լինում, երբեմն էլ այնչափ խիտ, որ իրաց են կպչում ու խառնուում: Այդ ժամանակ հիւանդի գէմքը բոլորովին անձանաչելի է դառնում: Շատ է դուրս տալիս նոյնպէս մատերի վրա և հիւանդները սաստիկ այրոցք ու ցաւ են զգում: Իսկ ձեռների ափերն ու ոտերի տակի մաշկը չափազանց հաստ ու ձգուած է լինում: Նրանց վրա բըշտիկներ չեն գոյանում, այլ մնում է միայն կարմրութիւն:

Վերջապէս 12—13-րդ օրերը բշտիկներն սկսում են չորանալ ու կերիւ բունել:

Այդ երկու կերպ է լինում:


Կամ բշտիկների միջի թարախը քաշւում է ծծւում, յետոյ չքանում է, աեղը թողնելով մի կեղտոտ մուգ գոյնով կեղեիկ, կամ թէ չէ—բշտիկները տրաքւում են, դուրս

թողնում թարախը և նոյնպէս, ծածկում գեղնագոյն կամ մուգ կեղեռվ:

Այս միջոցին էլ տաքութիւնը իջնում է, հիւանդի ընդհանուր ինքնազգացումը լաւ լանում է, աչքերի ու գէմքի ուռուցքները պակասում են, մաշկի գոյնը քիչքիչ բնական է գառնում: Սակայն այս շրջանում քորի շատ նեղացնում է հիւանդին, որը քորում է մարմինը, իսկ դրանից խուցիկները բորբոքւում են, աւելի խոր են ընկնում և աւելի ուշ լաւանում:

Չորս-հինգ օրից յետոյ կեղեները ակը սում են թափուել — մի տեղ վաղ, մի ուրիշ տեղ ուշ, և ընդհանրապէս 16-րդ օրը մարմինը մաքրում է, միայն բշտիկների տեղերը մնում են մի քանի օր էլ կարմրաւուն բծիկներ, որոնք յետոյ սպիտակում են: Իսկ այն տեղերը, որտեղ բորբոքումն սաստիկ է եղել, գոյանում են սպիներ — որոնք կազմում են չեզը: Եթէ չեչերը չափազանց շատ են և ձուլում են իրար, այն ժամանակ գոյանում են մեծ սպիներ, որոնք ծոմուռ են գէմքը և երբեմն չափազանց անդուրեկան արտայայտութիւն տալիս նրան:

Այսպէս է լինում մարմնի վրայի ցանը: Բայց, ինչպէս ասել ենք, ներսի (այն



Ջեների բօնք, որ համ է, որը կանգնած է Լուսնաւոր, Կենաչեան սիրոս սկիեռում (պատշաճ):

է. բերանի, որկորի, ըմպանի, շնչափողի) թաղանթներն էլ են դուրս տուիս:

Տեսնենք, թէ ինչ է կատարւում այս տեղերը:

Առհասարակ թաղանթների վրա գուրս տուած պզուկները բշտիկ չեն դառնում, որովհետև տաքութիւնից ու մշտական խօնաւութիւնից (որ միշտ կայ մեր ներսը), այս պզուկների վրա մաշկը հալւում է, վեր գալիս ու տեղը մնում են փոքրիկ խոցիկներ, որոնք գորշագոյն են դառնում: Խոցիկները միանում են իրար ու կազմում են բաւականին ընդարձակ խոցեր: Քթի ծակերից ու շրթունքներից ակսած մինչև կոկորդը խոցեր կարող են դուրս տալ: Քիթը ներսից երբեմն ուռչում է, այնպէս որ հիւանդը անկարող է լինում ազատ շնչել իսկ լեզուն բերանում մեծանում է, լցնում բերանը, խոցուում, նոյնիսկ դուրս ընկնում բերանից: Այս գրութիւնը տաժանելի է դառնում հիւանդի համար, մանաւանդ որ բերանից անդադար թուք է հոսում:

Յաճախ ծաղիկ ունեցողները մեծ զըժուարութեամբ են կուլ տալիս սաստիկ ցաւերի պատճառով: Այդ նշանակում է, որ բշտիկներ են դուրս տուել նաև ըմպանի

ու որկորի մէջ: Իսկ եթէ ձայնը խըռպոտած է ու հազ կայ, պէտք է ենթադրել որ կոկորդն ու շնչափողն էլ են հիւանդացել:

5. ԸԱՐԴՈՒԽՆԵՐ

Յաճախ նոյնիսկ ծանր ծաղկախոը թեթէ է անցնում և ոչ մի հետք չի թողնում հիւանդի վրա, բայց սակաւ չի պատահում նաև, որ հիւանդութիւնը բարդում է, այսինքն, ծանրանում է նոր երեսյթներով:

Յիշենք գլխաւոր բարդումները:

Սկանչի բորբոքումն: Քթի քամակից մի խողովակ է գնում մինչև ականջի խորին մասը: Դա եւստախեան խողովակն է. Կը մէջ էլ կարող է ծաղիկ դուրս տալ, որից խողովակը բորբոքում է, յետոյ ականջն էլ է բորբոքում: Այդ է սպատճառը, որ ծաղիկով հիւանդները սաստիկ ականջացաւ են ունենում ու միքանի օրից յետոյ ականջի թաղանթը (թմբկաթաղանթը) պատրուում է ու երկար ժամանակ (երբեմն էլ ամբողջ կեանքում) թարախ արտադրում:

Կոկորդի բորբոքումն: Ծանր դէպքերում կոկորդի կոճիկները բորբոքում են,

փթում, թարախակոյտեր կազմում ու խեղ-
դում հիւանդին:

Թոքերի բորբոքմբն, երբեմն այնքան
սաստիկ է լինում, որ թոքերի մի մասը փը-
թում է (քաղցկեղ-բանցրեա). պատահում
է նոյնպէս արիւնհոտութիւն թոքերից:

Երիկամները կարող են նոյնպէս բոր-
բոքուել, այն ժամանակ առաջ է գալիս մէտ-
կալութիւն, կամ մէզը շատ սակաւ է ար-
տադրում, երբեմն էլ արնալից է լինում:

Աչքերը: Չափազանց յաճախ են պատա-
հում աչքերի վնասումներ: Մենք ասել ենք,
որ ծաղիկոտի աչքերը միշտ կարմրած ու ար-
տասուալից են լինում, ցաւում են լուսից:
Յաճախ էլ կոպերն այնքան ուռչում են, որ
աչքերը խուփ են մնում և թարախը, հաւա-
քուելով կոպերի տակը, անփաղար զրգուում
ու բորբոքում է աչքի խնձորը: Բայց զար-
հուրելին այն է, որ յաճախ թափանցիկ եղջ-
րային թաղանթի (բբի). շուրջը սպիտակու-
ցի վրա խոցիկներ են գոյանում, որոնք կա-
րող են խոր ընկնել, ուտել եղջրաթաղան-
թը և այն ժամանակ աչքը կծակուի ու կդա-
տարկուի. եթէ չծակուի էլ, սպիտակ հատ
կմնայ: Այսպիսով ծաղիկը յաճախ առաջ է
բերում կուրութիւն, յաճախ էլ երկու կող-

մից, կոյրերի մի երբորդականը (երեքից մէ-
կը), ծաղիկից է լինում (իսկ հազր աւելի
ևս յաճախ):

Ցիշասակելու է այն կորստաբեր աղ-
դեցութիւնը, որ գործում է ծաղիկը յուն-
քեան վրա: Առհասարակ յզի կանանց ծա-
ղիկը շատ աւելի սաստիկ ու վասնգաւոր է
լինում. պատահում են վիժումն ու վաղա-
ժամ ծննդաբերութիւն, իսկ եթէ երեխան
առողջ էլ է մնում, մի երկու օրից յետոյ
վարակում է ծաղիկով, կամ հէնց ծննդում
է ծաղիկը վրան:

Կան շատ ուրիշ տեսակ բարդումներ՝
որոնց մասին աւելորդ է երկար խօսել: Կա-
մենք միայն, որ կարող են առաջ գալ ան-
դամալուծութիւններ, թուլութիւններ, մին-
չե անգամ հոգեկան հիւանդութիւններ:

6. ԾԱՂԻԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մինչև այժմ մենք նկարազրում էինք
ծաղիկի բնական լնթացքը և այն ձեր, որը
ամենից յաճախ է պատահում, բայց այս հի-
ւանդութիւնը զանազան ձերը է ընդունում:

Ամենից առաջ պիտի զիտենալ, որ եր-
բեմն հիւանդութիւնը հէնց սկզբում կանգ է

առնում, այնպէս որ ժամանակից առաջ, մինչև իսկական ծաղկացանի դուրս տալը, վերջանում է:

Երբեմն բշտիկները միմեանց շատ մօտ են դուրս տալիս, ու տեղաեղ կպչում-ձուլ- ւում են իրար, այնպէս որ թարախանալու ու կեղևակալման միջոցին զլուխը, վի- զը, ուսերը ծածկում են հաստ կեղևով, ո- րի տակ լճանում է թարախը ու առաս դուրս թափւում, երբ կեղևները ծակում ենք: Այս ձեւը չափազանց վտանգաւոր է:

Աւելի եւս վտանգաւոր եւ համարիա միշտ մանացու է սեւ ծաղիկը: Սա այն ձեռն է, երբ մաշկը տեղաեղ ընդարձակ ար- նային գունաւորում է ստանում, յետոյ հի- ւանդի քթից, բերանից, ստամքսից, աղիք- ներից, թոքերից, սրբանից (ետեից), մէզի հետ և այլն արիւն է հոսում: Նոյնիսկ բըշ- տիկների հեղուկը արնախառն է լինում, ու կարմիր գոյն ստանում: Այստեղից է սեւ ծաղիկլ անունը:

Ծաղիկը պատկանում է ծանր հիւան- դութիւններին, որոշ ձեւերը, ինչպէս ուշ՝ ծա- ղիկը, համարեա միշտ մահառիթ են, իսկ հասարակ ծաղիկը կարող է սպանել հիւան- դին իր բարդութիւններով: Առհասարակ հի-

ւանդութեան սկզբին դժուար է ասել, թէ ինչ ելք կունենայ ցաւը.—թեթև կլինի նա թէ ծանր: Երբեմն ամենածանր կերպով ակսուած ծաղիկը թեթև, առանց բարդում- ների է անցնում, երբեմն էլ ընդհակառակ: Ընդհանրապէս հիւանդի կազմուածքը մեծ նշանակութիւն ունի: Քանի կազմուածքը ա- մուր է, այնքան էլ հեշտութիւնով է տա- նում հիւանդութիւնը:

7. ԽՆԱՄՔ

Ծաղիկն այնքան դժուար ու ծանր հի- ւանդութիւն է, որ հէսց սկզբից պիտի բժշկի դիմել և չասել թէ, Աստծու արածն է ու ձեռները ծալած նստել: Չպէտք է մո- ռանալ, որ ծաղիկն իր որոշ ընթացքն ու- ունի, որ մենք գեղերով չենք կարող կանգ- նեցնել նրա ընթացքը, ինչպէս և քութէշի կամ տիֆի ընթացքը: Հիւանդութիւնը պի- տի իր ճանապարհով գնայ: Բայց մենք մեր ինսամքով կարող ենք զանազան բարդու- թիւնների դէմն անել, կազդուրելով հիւան- դին, աշխատելով պահպանել նրա ուժերը, որպէս զի նա կարող լինի կրուելու հիւան- դութեան դէմ: Բայց հիւանդին-իրան խնա-

Հիւանդին պիտի պառկեցնել տան ա-
մենարնղարձակ ու ամենալոյս սենեակը, ո-
րից նախօրոք պիտի գուրս տանել կահ-կաշ-
բասիները, մանաւանդ փափուկները (գոր-
դերը և այլն), թողնելով հիւայն մի անկո-
ղին, մի սեղան և երկու-երեք աթոռ։ Լու-
սամուաները պիտի վարագուրել, որպէս զի
սենեակում մուժ լինի, քանի որ հիւանդին
լոյսը անախորժ է։ Սենեակի տաքութիւնը
պիտի լինի 15⁰ *): Անկողինը ընդարձակ ա-
րեք, սաւանները ամեն օր փոխեցէք, մա-
նաւանդ երբ հիւանդի մաշկը սկսում է թե-
փուտել:

Ուտելիքը պարզ ու մշնդաբար է լի՛
նելու և անպատճառ հեղուկ կամ զոնէ ջրիկ:
Ուրեմն կարելի է տալ եփ տուած կաթ,
անխառն կամ թէյով (թէյը ի հարկէ բաց
լինի): Կարելի է տալ նաև նոր, տանը մէ-
րած մածուն: Յետոյ լաւ, են թէրախորով

⁴⁾ Անհակի տաքոթիւնը չսփռմէն պատի ջերմա-
շափում:

ձուն, մսաջուրը, զանտպան խիւսեր, կաթ-
նով և այդպիսի կերակուրներ: Հացը քանի
քիչ լինի, այնքան լաւ, տուեք սպիտակ հաց
 $\frac{1}{4}$ կամ $\frac{1}{2}$ փունտ օրական: Ծարակի գէմ
պէտք է խմեցնել լիմոնադ, թթու խմիչք-
ներ, օրինակ լիմոնով թէյ, նոյնպէս և սել-
տերեան ու սօդայի ջուր:

Զավիազանց կարեսոր է, որ հիւանդը կապ չմնայ: Ամեն օր պիտի գուրս գնայ: Եթէ երկու օր շաբանակ կապէ, պէտք է լուծողական տալ (անզլիական աղ, դառը հանքային ջրեր, ձեթ, լուծողական լիմոնափ և այլն:) եթէ չի ներգործում, դրեխ (կիփստիր) գրէք հասարակ գոլ ջրով կամ պապ-նաջրով կամ իւղով *): Գրեխի հեղուկը պիտի 14⁰ տաքութիւնունենայ: Իսկ սրտախառնութեան դէմ, եթէ բժիշկ չկայ տեղս, պիտի առողջի կատրներ, փորին մանաւեխ դրէք, տաքայնող փաթեթ կապէք:

Օրը գոնէ երեք ամսգամ հիւանդի տաքութիւնը չափեցէք. — առաւօտը վաղ, կեսօրին, երեկոյեան։ Եթէ տաքութիւնը բարձր է, բացի բժշկի տուած գեղերը, պիտի շփել մարմինը սառը ջրով օրական 3—4

^{*)} S. «Առաջլ.» № 12 «Մանր խորհուրդներ :

անգամ, կամ իրիկնապահին լողարան դնել
25⁰ ջրի մէջ։ Ի հարկէ լողարան դնել ա-
մեն հիւանդի չի կարելի, որովհետև հիւան-
դը կարող է սրտի ախտ ունենալ և նրա վրա
սառ լողարանները կարող են վատ ազդել։
Հարցըք բժշկին։ Եթէ հիւանդը տանջւում
փորացաւերից, կամ անդամների ցաւերից,
լաւ է նոյնպէս գոլիկ (25—22⁰) լողարաններ
սարքել, ու 10—15 րոտէ ջրի մէջ պա-
հել *), կարելի է նոյնպէս հիւանդին
թաց սաւանի մէջ փաթաթել, լաւ ծածկել
ու թողնել 8—10 րոտէ, յետոյ վերցնել,
մարմինը չոր շորով շիել ու շապիկ հագցնել։
Շատ դուրս տուած տեղերը (այն է,
դէմքը) պէտք է ծածկել։ Դրա համար վերց-
րէք մի կտոր քաթան, թաթախեցէք նշի իւ-
ղի մէջ կամ (աւելի լաւը) վրան քսէք բօրա-
վազլին (օրինակ վազուին) և դրէք դուրս
տուածի վրա։

Երբ սկսում է կեղե գոյանալ, ուշադիր
եղէք, որ երեխան երեսը չքորի, որովհետև
այդ միջոցին ևս սաստիկ քոր է զգում հի-
ւանդը և կարող է պոկել կեղեր, խոցը խոր

* Արտեղ խակական լողարաններ չկան, պէտք
է սառշատի մէջ ջոր լցնել։

գցել որից ուշ կլաւանայ և լաւանալիս էլ
սպիներ կթողնի։ Դարձեալ նոյն նշի ու
սրօվանսի իւղեր և վազլին պիտի գործ
դնել։ Բացի այս բոլորը, հիւանդին այս ժա-
մանակ ևս պիտի օրը մի երկու անգամ լո-
ղարան նստեցնել 27⁰ ջրի մէջ ու թողնել
20 րոտէ։ Եթէ այս բոլոր միջոցները քորը
չեն կանգնեցնում, խորհուրդ ենք տալիս
մարմինը շիել օղիով կամ ջրախառն օդրկօ-
լօնով (կէսը օդրկօլօն, կէսը ջուր)։ Ճշմարիտ
է, սպիտը մի քիչ կծծեցնում է մարմինը,
բայց այդ շուտ է անցնում և քորը կտրւում
է։ Երեխանների ձեռները լաւ է գիշերները
փաթաթել-կապել մի կտոր տախտակի կամ
հաստ կարառնի վրա, որ չկարողանայ քո-
րել պկուկները։

Բերանը պիտի ողողել բորաթթւուտի-
(բօր-նայա կիսլօտա) կամ բերթօլետեան աղի,
շիբի կամ աղաղի (տանին) լուծուածքով օ-
րական 3—4—5 անգամ։ Պէտք է վերցնել
մի թէյի գգալ յիշած աղերից մէկից ու հա-
լեցնել մի թէյի բաժակ ջրի մէջ։ Իսկ եթէ
երեխան անկարող է ինքը ողողել, պէտք է
մի բարակ փայտի կամ ձողի վրա բամբակ
փաթաթել, թաթախել լուծուածքի մէջ ու
քսել բերանը, կատիկը և ըմպանը։

Եթէաճիւանդի ձայնը խոպոտ է դարձել, այդ նշանակում է, որ կոկորդն ուռագծէ և ալէտք է մեծ զգուշութեամբ հիւանդի բժշկի խորհրդին և թոյլ տալ չնչափողը հատելու (տրախէօտոմիա անել), որպէս զի հիւանդը կարող լինի այդ նոր ծակով չնչել: Յամենայն դէպս շնչարգելութեան միջոցին վերցրէք մի սպունդ կամ թաշկինակ, թաշախեցէք եռման ջրի մէջ ու գրէք բղին և շուաշոււա փոխեցք:

Սաստիկ գլխացաւի ու դառնանցանքի դէմ գործ է ածում սառցապարկ, որ պէտք է շարունակ գլխին պահել: Վայրէ Սրանք են այն ինսամքը, որ կարելի է տալ հիւանդին այն տեղերում, ուր բժիշկ չկայ: Կրկնում ենք, եթէ տեղում հիւանդանց կայ, պիտի հիւանդին անմիջապէս այնտեղ տեղափոխել, յամենայն դէպս պիտի բժշկի գիմել:

Ահա թէ ինչ պիտի անեն ծնողները հիւանդի համար: Սակայն հիւանդին ինսամերով չպէտք է մոռանալ առողջներին, որոնք նոյնպէս կարող են վարակուել ու հիւանդանալ:

Սրանց մասին էլ պիտի մտածել. ամենից առաջ պէտք է բոլոր չպատուաստած-

ներին ծաղիկ պատուաստել, իսկ եթէ վազուց է ինչ պատուաստած են, նորից անել: Եթէ տան մէջ երեխաներից կամ մեծերից մէկը ծաղիկով բռնուել է, հէսց իսկոյն պիտի կամ հիւանդին հիւանդանոց տանել, կամ առողջներին բոլորին տեղափոխել մի ուրիշ տուն: Եթէ այդ էլ անկարելի է, պէտք է միւսներին բոլորովին հեռացնել հիւանդիսեներից: Հիւանդի սենեակում միայն նրա մայրը կամ պահողը պիտի մնայ, հիւանդին ինսամողը նոյնպէս չպէտք է մտնի միւս սենեակները ու չշփուի առողջների հետ, որպէս զի չվարակի նրանց (մենք վերևն ասացինք, որ մարդ կարող է ինքն առողջ լինել, բայց մի երրորդ անձի վարակել:): Հիւանդի արտաթօրութիւնները ու փոխածը պէտք է ախտահանել և այնպէս դէն թափել: Սիստահանութեան համար գործ է ածում ի միջի այլոց և կրաջուր: Առողջանալուց 15 օր անց միայն, երբ մաշկը բոլորովին մաքրուել է, կարելի է երեխային գովրոց ուղարկել, ի հարկէ վաղօրօք հարկաւոր է մի քանի անգամ լողացնել, հագուստը փոխել, կացարանը ախտահանել ^(*):

^(*) Սիստահանութեան մասին ու մեր «Պատակիչ հիւանդաթիւնները ու նրանց թողնը, զրքուիլը»

ՊԱՏՐԻԱՍՈՒՄԸ


1. ՊԱՏՈՒՅՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Ամենահին ժամանակներում յայտնի էր,
որ ծաղիկը չի կրկնառում և ով մի անգամ
հիւանդացել է, նա այլև չի վարակուի, կամ
եթէ հենց վարակուի էլ, հիւանդութիւնը
թեթև կանցնի:

Այս հիման վրա սովորութիւնն կար, երբ
մի տեղ ծաղիկ էր ընկնում, ճնողներն աշ-
խատում էին, որ իրանց երեխաները վա-
րակուեն. դրա համար պառկեցնում էին
նրանց այն հիւանդների կողքին, որոնց ծա-
ղիկը թիթելու է եղել: Երեխաները թեթև կեր-
պով հիւանդանում էին և այդպիսով ազատ-
ուում էին ծանր վարակումից:

Այս համեստամանքը բնականաբար պիտի
ներշնչէր մարդկանց գիտմամբ վարակելու ե-
րեխաներին և, պատմաբանների առելով, գեռ
շատ դարեր Քրիստոսից առաջ չինացիներն
ու հնդիկները ծանօթ էին պատուաստին:

ամբողջ այս պատճենագույն կա պահպանը
զնուած այս արքայի պատճենագույն կա պահպանը
Կ. 3.



Զենքներ ծաղկի է պատմառութ վրեւիսից:
Մարմարիօնէ արձոնն, կանչնեցրած բուրնիում, զարծ Խնախիլրդէ:

Հնդիկների մէջ բրահմիններն էին (հոգևորական դասը) պատուաստողները։ Նրանք թեթև կերպով նշանառում էին երեխանների թեթև ու կարուածքին ծաղիկի թարախ էին քսում, որ վերցնում էին հիւանդի բշտիկներից։ Պատուաստումը յայտնի էր նաև յոյներին ու հայերին և մի քանի դար մեզնից առաջ ծաղկահասութիւնը արդէն տարածուած էր թիւրբական երկրներում, մասնաւորապէս կ. Պոլսում։ 1717-ին անգլիացցց գեսպան Մօնտէգիւի կինը այսքաղքուտ պատուաստել տուեց իր տղային և հետք չորացրած պատուաստանիւթ բերեց հայրենիք (Անգլիա):

Այս տիկնոջ շնորհիւ ծաղկահասութիւնը սովորութիւն դարձաւ անգլիական բարձր դասակարգի, նոյնիսկ թագաւորական տան մէջ։

Անգլիայից պատուաստումն անցաւ ուրիշ երկներ և Ռուսիա։ Առաջին պատուաստուողը Ռուսաստանում ինքը կայսրուհի Եկատերինա Ա-րդն էր, որը Անգլիայից մեծ փառքով ու խոշոր վարձատրութեամբ բերել տուեց մի պատուաստող և իրան ու թագաժառանդ Պալին պատուաստել տուեց։ Պատուաստը վերցրին մի աղ-

քամ ընաանիքի տղայից, որին Կայորուհին ազնուականութիւն պարգևեց *):

Այսպէս ուրեմն, առաջու ա ժամանակները պատուաստումը կատարում էին մարդից մարդի, այսինքն. խկական ծաղիկով հիւանդացածի բաժինների բարախով, — և հարկէ, բնարում էին թեթև հիւանդներին։

Այս ձևի պատուաստումն ինքն ըստ ինքեան փոսնդաւոր էր։ Պատուաստածները ջերմում էին, նրանց ամբողջ մարմինը գուրս էր տալիս, ինչպէս խկական ծաղիկի ժամանակ և 300 պատուաստածից մէկը մեռնում էր։ Բացի այդ, ակներև եղաւ, որ թարախի հետ կարելի էր պատրաստել նոյնպէս և ուրիշ հիւանդութիւններ, օրինակ. սիֆիլիս, եթէ այն հիւանդը, որի բշտիկներից պատուաստ էին վերցնում, սիֆիլիս ունէր։ Եւ շատ պատուաստածներ վարակուել էին սիֆիլիսով։ Յետոյ տեսան, որ պատուաստի միջոցով ծաղկախաը աւելի ևս տարածուեց, որովհետեւ այդ պատուաստածներն էլ իրանց

Կ Թէ որքան բարձր էր գնահատում ծաղկապատուաստումը, աղջ ցոյց է ապակիս այն հանդամանքը, որ Անգլիայից հրամիրած ծաղկիկ կարուր ստացաւ Եկատերինա Կայսրուհից (60,000 ռ. վար, 25,010 տուրեկան թոշակ և խկական խորհրդականի տիտղոսաւում) 3

շուրջը ծաղիկ էին տարածում. — չէ՞ որ պատուաստաձներն էր ինչպէս իսկական հիւանդներ, կարող էին ուրիշներին վարակել: Եւ, յիրաւի, 18-րդ դարում հիւանդութիւնը սարսափելի ծաւալ ստացաւ և այնպիսի աղէտ դարձաւ, որ շատ երկրներում օրէնքով արգելուեց այդ ձեի ծաղկահատութիւնը:

Իսկական անվասս պատուաստումը գըտնուեց մեղնից մի դար առաջ, Զենինի ջանքով:

2. ԿՈՎԻ ԾԱՂԻԿԸ

Վաղուց անասնապահները նկատած էին, որ կովերի պտուկների վրա դուրս են տախս մի տեսակ բետիկներ, որոնք շատ նման են մարդի ծաղիկի բետիկներին, նկատուած էր նոյնպէս, որ յանախ այսպիսի կովեր կրողների մասերի վրա նոյնպէս դուրս են տախս նոյն ձեւի բետիկներ: Գլխաւորն այն է, որ ուրիշ ոչ մի տեղում ոչինչ չէր երեւում վարակուածի վրա. յետոյ վարակուածը ոչ չերմ էր ունենում, ոչ ուրիշ որ և է հիւանդական երևոյթ: Մի խօսքով, սա մի տեսակ հիւանդութիւն էր, որը նման էր

ծաղիկին և այդ նմանութեան պատճառով էլ կոչուեց կովի ծաղիկ: Կովի ծաղիկը զանազանութեամ է իսկականից նրանով, որ ցանը դուրս է տալիս միմիայն կովի ստիճանքների վրա:

Բացի այդ, մարդիկ նկատել էին և այն զարմանալի բանը, որ այն կով կրողները, որոնց ձեռներին դուրս էր տուել կովի ծաղիկը, այլ եւս իսկական ծաղիկով չին վարակում: Երբ համանարակ էր ընկեռում երկիրը ու չորս կրողմբ մարդիկ հիւանդանում մեռնում էին, այդ վարակուածները առողջ էին մնում:

Ամենքը տեսնում էին, որ կովից վարակուողները այլ ևս չեն հիւանդանում իսկական ծաղիկով, տեսնում էին ու անցնում, և ծաղիկը շարունակում էր ճարակել մարդկութիւնը: Մի մարդ միայն կանգ առաւ, լաւ մտածեց ու զննեց իր տեսածն ու լսածը և մի փրկարար միտք յդացաւ նրա զլիսում, միտք, որը պիտի փրկէր մարդկութիւնը ծաղկախտի ճիրաններից:

Մա կուարդ Զենիներն էր:

իսուսակար մատուցած ըստ և մաթուրան
դժբախ միա միամատ միա զմանով է
ու մատուցած մատուցած մատուցած մատուցած

ԵՌՈՒԱՐԴ ԶԵՆՆԵՐԸ
եղուարդ Զենները քահանայի որու
գի էր. նա ճնուեց Անդիայում, Բերկլէյ
փոքրիկ քաղաքում, 17 մայիսի 1749 թվին։
Փոքրիկ եղուարդը շատ վաղ որբ մը-
նաց, կորցնելով իր ճնողներին։ Նրա մեծ
եղբայրը տուեց եղուարդին ծխական դրա-
բոց, որտեղ 13 տարեկան հասակում նար-
աւարակեց իր քասրնթացը և այդ ժամանա-
կից վճռեց բժիշկ դառնալ, որովհետեւ չա-
փազանց մեծ սէր ունէր դէպի բնական գի-
տութիւնները։

Այդ ժամանակները բժշկականութիւն-
ուսանելու համար աշակերտ էին մանում-
սի որ և յայտնի բժշկի մօտ։ Զեններին
վիճակուեց աշակերտ մտնել վիրաբոյժ
Լուգովի մօտ և այդ էր, որ որոշեց նրա
ապագայ փառքը։

Մէկ օր Լուգովին դիմում է մի գեղջ-
կունի իր ակարութեան համար խորհուրդ
հարցնելու Վիրաբոյժը յայտնում է նրան,
որ նա ծաղկախտ ունի և կինը, այդ լսելով,
բացականչում է. «Անկարելի է, որ ես ծա-

դիկ ունենամ, ես կովի ծաղիկ եմ հանել»։
Գիւղացի կնոջ այս կտրական բացա-
կանչութիւնը մեծ տպաւորութիւն թողեց
պատահու վրա։ Նա մտածեց. «Յայտնի է,
որ վարակուղիները կովի ծաղիկով թեթև
կերպով են հիւանդանում և երբէք չեն մեռ-
նում։ Այս կնոջ բացականչութիւնն էլ ցոյց
է առաջիւ, որ, ժողովրդի կարծիքով, ով
հիւանդացած է եղել կովի ծաղիկով, նա
այլ եւ չի վարակուի իսկական ծաղիկով։
Եթէ ժողովրդի այդ կարծիքը ճիշտ է, ու-
րեմն երէ առողջ մարդի կովի ծաղիկ
պատուատին, նա այլ եւ չի վարակուի
իսկական ծաղիկախտով»։

Քսան տարեկան հասակում եղուարդը
տեղափոխուեց Լօնդոն և մատու աշակերտ
այն ժամանակուա մեծագոյն զիտնական և
վիրաբոյժ սլրօֆեսօր Զօն Հընտերի մօտ։
Նա յայտնեց իր մտքերը մեծ զիտնական
ուսուցչին և լուց նրանից հետեւեալ խօսքե-
րը, որ երբէք չմոռացաւ իր կեանքում։


«Դիտեցէք և փորձեր արէք, ասեց Հըն-
տերը, համբերութիւն ունեցէք, զապեցէք
ձեզ, եղբէք ճշտասէր և խստազահանջ դէպի
ձեզ—ինքներդ»։

Պարզ գեղջկունին ու հանձարեղ զիտ-

նականը —մէկը իր գոեհիկ պարզութեամբ ու անսասան համոզմունքով, միւսը մեծ խորիմաստ զգուշութեամբ—բացեցին էզուարդ Զեների աչքերը ու քաջալերեցին նրան շարունակելու իր մեծ գործը:

Եւ այդ մարդը հրաժարուեց իրան առաջարկած մեծ պաշտօններից, մնաց գիւղում իրեն համեստ զիւղական բժիշկ, ապրեց զիւղացու հետ, որ մօտ լինի իր փայտայած գործին, քանի որ զիւղերում միայն կարելի է ուսումնասիրել կովի ծաղիկը ու փորձեր անել: Բժիշկները ծաղրում էին նրան, ասում էին, որ նու անսառւնի հիւանդութիւն պատուաստերիվ, անսառւն է դարձնում մարդի, շատերը յարձակում էին նրա վրա, հալածումնրան: Բայց նա անսասան ու յամառ շարունակում էր իր աշխատանքը և մշակում էր պատուաստի խնդիրը:

1796 թւի մայիս ամսի 2-ը մի նշանաւոր թուական է մարդկութեան համար, ու բովինեան այդ պատմական օրն էր, որ 47 տարեկան Զեները բժիշկների ու հանդիսականների ներկայութեամբ իր առաջին պատուաստն արաւ Զէմս Ֆիստ անունով մի 8 տարեկան տղայի վրա:



Այս նկարը ցոյց է տալիս այդ պատմական բովին: Աջ կողմը գտնք տեսնում էք մի գիւղացի կին, որը ձեռը կապում է: Այս կինը կովի ծաղիկ էր ստացել ձեռին և հէնց այդ բշտիկներից էր վերցրել Զեները իր

առաջին պատուաստի հիւթը: Տեսէր ինչ
զարմացած և վախեցած դէմք ունին ներ-
կայ եղողները:

Ուրեմն եդուարդ Զենները իր առաջին
պատուաստման համար պատուաստի հիւթը
վերցրեց ոչ թէ իսկական ծաղկաբշտիկնե-
րից, այլ կովի ծաղիկից: Յետոյ նա ան-
միջապէս կովից չվերցրեց պատուաստը, այլ
կովի ծաղիկով վարակուած մի կնոջից, որ
միենոյն է, որովհետեւ կովի ծաղիկը պահ-
պանում է իր գորութիւնը մարդի միջով
անցնելով: Ուրիշ խօսքով՝ Զենները ապա-
ցուցեց, որ եթէ կովի ծաղիկը կովից պա-
տուաստելի մարդի, սրանից մի ուրիշին,
երկրորդից երրորդին եւ այն, եւ յետոյ
վերջինի բաժիներից վերցնենի բարախը ու
պատուաստենի մի սոռոջի, դարձեալ
կապատաստենի նրան վարակումից: Այդպէս
էլ արեց Զենները:

Բայց դառնանք մեր պատմութեան:

Այս առաջին փորձը շատ յաջող ան-
ցաւ. Երեխան բոլորսպին առողջ մնաց:

Այդմ մնում էր համոզուել, որ հիմի-
այդ տղան ապահովուած է իսկական ծաղի-
կից, այսինքն. որ նա այլու չի հիւանդանայ-
այդ հիւանդութիւնով:

Զենները համոզուած էր, որ փոքրիկ
ֆիսուր չի վարակուի իսկական ծաղկախ-
տով, բայց հարկաւոր էր ապացուցել այդ,
որ ուրիշներն էլ հաւատան, և յուլիսի 1-ին
նա իր երկրորդ փորձն է անում, որը միան-
դամայն արդարացըրեց նրա սպասելիքը:

Նորից ծաղիկը կոտրած էր անում
Երկրում: Զենները բնական ծաղիկի թա-
րախից պատուաստեց իր փոքրիկ ֆիսուրն
և սպասեց:

Նա մի քանի օր զիշել-ցերեկքուն չու-
նէր ու սրաւարովի սպասում էր փորձի ել-
քին: Պիտի արդարանային արդեօք իր այդ-
քան տարիների վայփայած յոյսերը, պիտի
առողջ մնար մանուկը, թէ պիտի ծաղիկ
ընկնէր ու տապալէր իր յոյսերը:

Եւ, յիրաւի, այդ փորձը պիտի որոշէր
պատուաստի խնդիրը: Եթէ տղան հիւան-
դանար, դա ապացոյց կլինէր, որ կովի պա-
տուաստը չի փրկում մարդին վարակումից
և այն ժամանակ, ի հարկէ, ամեն ինչ վեր-
ջացած էր Զենների համար: Նրա բազմա-
թիւ թշնամիները կհճառէին:

Իսկ եթէ յաջողուէր, եթէ երեխան ա-
ռողջ մնար. չէ որ այն ժամանակ դա կա-
տարեալ յաղթութիւն կլինէր և ծաղիկը,


այս սոսկալի ախտը, սանձած կլինէր...
Եւ Զենները երեք օր աննկարապրելի
յուզմունքի մէջ էր...

Անցաւ երեք օր, ԶԵՆՆԵՐԸ ազատ շունչ
քաշեց. — երեխան առաջ էր մնացել...

«Դրիչն անկարող է նկարագրել այդ
մարդու անսահման երջանկութիւնը, ասում
է մի պատմաբան, որովհետև իրագործում
էին նրա ամենանոռիրական ցնորքները, ցը-
նորքներ, որոնք նրա կեանքի ամբողջ նպա-
տակն ու խմասոն էին կազմում»:

Այսպէս, գիւղական հասեատ բժիշկը ան-
խոնջ աշխատանքի ու առկունութեան շնոր-
հիւ իր դարի ամենամեծ մարդկանցից մէկը
զաւաւ։ Նրա վառքը տարածուեց ամբողջ
աշխարհ, և ամեն կողմից մարդիկ գալիս էին
այդ հերոսի երեսը տեսնելու, նրա ձեռը
սեղմելու։ Թագագիր ինքնակալներ բաղդ
էին համարում Զեններին տեսնելու ու նրա
խնդիրները կատարելու։ Նա հասել էր մի
այնպիսի վառքի, որին չի հասել գուցէ ոչ
մի բժիշկ իր կենդանութեան ժամանակ։
Հոչակուած ու վայփայած ամենքից, նա
մեսաւ 1823 թ. յունուարի 26-ին։

౬



1896-ին լրացաւ առաջին հակածաղկային պատուաստի հարիւրամեակը, և ամբողջ գիտական աշխարհը տօնեց այդ օրը, որովհետև ճիշտ մի դար առաջ մարդկութիւնը փրկւումէր մի զարհուրելի աղետից....

3. ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄՆ

Այսպէս ուրեմն, ԶԵՆՆԵՐՆ ապացուցեց, որ երեխային կովի ծաղիկ պատուաստելով, կարելի է փրկել նրան իսկական ծաղկախափ վարակումից:

Մենք ևս այսօր այդ ձեռվ ենք պատուաստ անում:

Պատուաստի հիւթը մեծ քանակութեամբ պատրաստելու համար հիմի այսպէս են վարւում: Մատաղ, մի քանի ամսական հորթի փորի վրա պատուաստում են 100—150 տեղ կովից կամ նոր պատուաստուած երեխայի բշտիկներից ստացած հեղուկը: Պատուաստած տեղերը, ի հարկէ, բշտիկներ են գոյանում ու լցում թարախով բշտիկների այդ հիւթը վերցնում են պահում ու յետոյ նրանով պատուաստներ անում: Ծաղկահիւթը լցնում են չափազանց բարակ փոքրիկ ապակէ խողովակների մէջ, ծայրերը գմում ու պահում: Այս ձեռվ էլ ուղարկում են զանազան տեղեր:

Տեմնենք, ինչպէս են պատուաստում:
Տարուա ամենալու ժամանակին է զա-

րունը ու առունը: Շոքերին չի կարելի պատուաստել, թէև բարձր տեղերում կարելի է, որովհետև այն տեղերը չուգ չի մնում: Առհասարակ պատուաստում են երեխական մինչեւ 1 տարին, չու համանարակների ժամանակ աւելի վատ: Կարելի է պատուաստել այն ժամանակ միայն, երբ երեխան բոլորովին առողջ է: տաքութիւն չունի, փորը կանոնաւոր է: Պատուաստելուց առաջ երեխային լու լուցնում են:

Պատուաստումի 4-րդ օրը ծակած տեղերում երկում են փոքրիկ կարմիր պղուկներ, որոնք օրէ ցօր մեծանում են, լցում թափանցիկ մաքուր հիթով: Միւս օրը պըզուկի մէջ տեղը գոյանում է փոքրիկ բըշտիկ, որը օրէ ցօր մեծանում է ու փոս ընկնում (պորս), ինչպէս տեսանք իսկական ծաղիկի ժամանակ: 7—8-րդ օրը բշտիկների շուրջը կարմիր շրջանակ է կազմում, մաշկը այդ տեղերում քիչ ուռչումէ: 9—10-րդ օրը բշտիկների հեղուկը սկսում է պղտորուել ու գեղնել և այդ օրերը քիչ տաքութիւն է տալիս, որը առանց բժշկութեան էլ անցնում է: 10-րդ օրը բշտիկներն սկսում են չորսնալ և մինչև 14-րդ օրը ծածկում են կեղեռվ, որոնք 3—4 շաբաթուա մէջ պոկում են—ընկնում:

Որպէս զի պատուաստը յաջողուած համարուի, անպատճառ պէտք է գոնէ եր-

կու Տեղ լաւ «բռնի», այսինքն, երկու կանոնաւոր բաժիկ գոյանապ: Եթէ միայն մէկն է համում, կարելի է նրանից հիւթ վերցնել և մի ուրիշ տեղ էլ պատուաստել:

Պատուաստել կարող էն միմիայն բրծիւը կամ հմուտ պատուաստողը, որոնք առանձին քննութիւն են տալիս, պարապած են լինում որևէ բժշկի մօտ և վկայագրեր ունեն նրանից: Այս է պահանջում օրէնքը^{*)}:

Մեզ մօտ այդ գժուար գործը կատարում են դեռ ևս դալլաքները, որոնք իրանց կեղտուա նշտարով, վաստ ծաղկահիւթով, անմաքուր ձեռներով շատ բարդութիւնների պատճառ են դառել:

Եւ, յիրաւի, բժշկի ձեռով կատարած պատուաստը միշտ անվտանգ է անցնում, որովհետեւ նա այդ անում է մաքուր կերպով և այնպէս, ինչպէս պատուիրում է զիտութիւնը: Այնինչ դալլաքների արածը յաճախ խեղճ երեխաների մահուան պատճառ է ղառնում: Ես տեսել եմ երկու երեխայ, որոնք կարմիր քամի էին ստացել դալլաքի պատուաստից: Նրանցից մէկը վախճանուեց:

Խնամք պատուաստուից յետոյ: Պատուաստումից յետոյ պիտի բաց թողնել թիվկը մի երկու բոսկէ, որպէս զի չորանայ, և ապա հազցնել մաքուր շապիկ: Շապիկի թիվ

^{*)} Նրազական երկներում պատուաստուներ մասնագէտ բժիշկներ են.

պիտի լայն լինի, որ հեշտութեամբ յետքաշուի: Եթէ պատուաստով կվախենայ, մի գուցէ պատուաստը կեղառաեն, նա վրան կալ կրնի:

Առաջին օրերը ոչինչ չպէտք է փախել երեխայի սովորութիւնների մէջ. պէտք է կերակրել և առհասարակ պահելնոյն ձևով, ինչ որ առաջ, միայն պէտք է լաւ հետեւ որ փորը միշտ կանոնաւոր լինի: Չորս-հինգ օր պատուաստումից յետոյ պիտի շաբունակել լողացնելը.—սխալ է այն կարծիքը, թէ ջուրը պատուատին վնաս է: Միևնուն ժամանակ պիտի չափել երեխայի տաքութիւնը և, երբոր կակսի բարձրանալ դադարեցնել լողացնելը, բայց այնուամենայնիւ պէտք է ամեն օր մարմինը դոլ ջրով շփել, որ մաքուր լինի: Իսկ երբ կեղեները կկոշտանան, նորից պէտք է սկսել լողացնելը:

Եյսպէս է արւում ծաղկահատութիւնը, որը փրկում է երեխային իսկական ծաղիկով հիւանդանալու մեծ վտանգից:

Սակայն այս պաշտպանութիւնը գնալով նուազում է և, 8—10 տարի պատուաստից յետոյ մենք էլի կարող ենք հիւանդանալ իսկական ծաղկախտով: Այդ հիման վրա պատուաստումը պիտի կրկնել 8—10 տարին մի անգամ: Ընդհանրապէս երեք անգամ պիտի պատուաստել. մէկ ծննդեան առաջին ամիսներում, մէկ—երեխան դարպոց տալիս (8—10 տարեկան), մէկ էլ զինուո-

առաջութիւնից առաջ (20—21 տ.): *) իսկ
առաջարակների ժամանակ—իսկոյն:

Սա կրկնապատճառումն է

Այսպէս ուրեմն, զիառութիւնը տուել է
մեր ձեռքը մի զօրեղ միջոց մեր զաւակնե-
րին մահից, այլանդակուելուց, հարիւր տե-
սակ ցաւերից, կուրութիւնից փրկելու հա-
մար: Հարիւր տարի է անցել այդ օրից, երբ
ապացուցուեց զիառաւոր կերպով, որ պա-
տուաստումը պահպանում է մանկան իսկա-
կան ծաղիկի վտանգից, և մենք հայերս գեռ-
չենք հասկացել դրա մեծ նշանակութիւնը.—
ու մեր զիւղերում՝ մանուկները մեռնում
են ու մեռնում...

Զէ որ սա էլ մի աղէտ է: Զէ որ պի-
տի կոռւել դրա հետ ևս, մանաւանդ որ
կոռւելը ու յաղթելը դժուար չէ, քանի որ
մեր ձեռքին մի զօրեղ միջոց կայ—պատռա-
սումը: Քանանաները թող քարոզեն տաճա-
րից, ուսուցիչները ու բոլոր բանիմաց ու հաս-
կացող մարդիկ թող հասկացնեն ժողովրդին
պատռաստման անհրաժեշտութիւնը, և մենք
փրկած կլինենք մեր երեխաներին ծաղիկից!..

Երկուխօսքով կասենք, որ ջրծաղիկը ոչ մի
կալ չոնի իսկական ծաղիկի նես: Սա բոլո-
րովին ուրիշ հիւանդուրիւն է, և ջրծաղիկը ըն-
կածը կարող է իսկական ծաղիկ էլ ստանալ:

*) Այսպէս է պահանջում զերմանական օրէնսդրու-
թիւնը:



Կիսամսեա նկարագարդ հանդէս 4- 6 նոյնպէս
նկարագարդ գրքոյի կներով.

Տարեկան բաժանորդագինն է 2 ռ. 50 կ.

Արտասահմանում. . . 10 ֆր. կամ 3½ ռ.

Հանգէն. Тифлісъ, Тредакція «Арогджапаикъ Терть».

Արքանություն, Tiflis. Redaction «Arogdjapahik Tert»

Գ-ր. Վ. Արծրունու հրաժարակութիւնները.

- | | |
|-----|---|
| 1) | Ժամանակակից (մի քանի օրինակ միայն) 20 կ. |
| 2) | Խօլերայի մասին (սպառուած), 3) Խօլերա 5 կ. |
| 4) | Հիպնոտիսմ, հատ, I. (սպառուած) 25 կ. |
| 5) | Հիպնոտիսմ, հատ, II. 15 կ., 6) Դպրոցական առողջապահութիւն (պատկերազարդ) 50 կ. |
| 7) | Առողջ երեխաների խնամատարութիւն 25 կ. |
| 8) | Սիփիլիս, Կակուզ շանկը, Սուսունակ 25 կ. |
| 9) | Թշուառների բարեկամ բժիշկ Հասպ 20 կ. |
| 10) | Ամուսնութիւն 75 կ. |
| 11) | Աղջիկ (առողջ, և բարոյագիտակ, էտիւդ) 75 կ. |
| | № 1. Մի՛ ԽՄԻ՛Ր, Երկ, տ. (նկարներով) 5 կ. |
| | № 2. ՎԱՏ ՅԱՒ (նկ.) 6 կ. |
| | № 3. ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆ ԴՈՒԹԻՒՆԵՐԸ 15 կ. |
| | № 4. ԹՈՐԱԽԱՑԿԱՄ ԲԱՐԱԿԱՑԱՒ (նկ.) 10 կ. |
| | № 5. ԴՈՂԵՐՈՑՔ ԿԱՄ ՄԱԼԱՐԻԱ (նկ.) 5 կ. |
| | № 6. ԽՆՁԵԼՈՒԷՆՑԱ, ԿԱՄ ՆՈՐ ՅԱՒ (նկ.) 3 կ. |
| | № 7. ՄԻ՛ ԽԽԻ՛Ր. 5 կ. |
| | № 8. ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԵՐԸ (նկ.) 5 կ. |
| | № 9. ՎԱՏ ՅԱՒ ԿԱՄ ՍԻՖԻԼԻՍ, Երկրորդ հրատարակութիւն Ա. մասն (9 նկ.), 20 կ. |
| | № 10 ՎԱՏ ՅԱՒ ԿԱՄ ՄԻՖԻԼԻՍ Բ մասն 15 կ. |
| | № 11 ԾԱՂԻԿ ԵՒ ՊԱՏՈՒԱՍ 15 կ. |